

փող տուող չկայ գրքի և գրի համար, իսկ եթէ հայ հարուստի գլխին տուող լինի՝ նա տասը միլիօն կ'տայ ժողովուրդը կոտորել տալու համար և ժողովիկ կ'գտնուին, որ այդ նպատակով փող կ'ժողովեն, իսկ գրքի, գրականութեան և հային յատուկ և նրա քսակական արժանիքը կազմող կուլտուրական գործերի համար շատ դժուարութեամբ կարելի է միջոցներ գտնել:

Մի յիսուն տարի Կովկասում հայը իրեն յատուկ խաղաղ կուլտուրական գործերով էր ապրում և նա փարթամացաւ, հայ ժողովուրդը բազմացաւ, ուստի և իբրեւ անհեռատես ժողովուրդ կամեցաւ Բերլինի 61 յօդուած ունենալ, որ այսօր չկայ և որի պատճառով կէս միլիօն ժողովուրդ կոտորուեց ու տարագրուեց, երկիրը դատարկուեց, հայթուրքական կոտորածներ առաջ եկաւ Կովկասում, Նախջևանի, Բաքուի, Գանձակի, Շուշուայ, Ղուբայի, Եւլախի և այլ տեղերի հայութիւնը տկարացաւ, առևտուրը և հողերը անցան ուրիշների ձեռք, ահագին բազմութիւն գաղթեց Կովկասից արտասահման և Ռուսաստան, ուր իհարկէ պիտի անհետանայ և կորչի, որպէս Լեհաստանի, Մոլդավիայի, Հնդկաստանի և այլ տեղերի գաղթականները կորան:

Եթէ մեր պատմագիրները կարդան հայ ժողովրդի անկոչ ղեկավարները՝ շատ բան կ'ովորեն անցեալից:

Գ. ԵՆԳԻՐԱՐԵԱՆ

ՄՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Գ. Կոստանեանց. Հառիճայի վանական ընկերութեան յիշատակարանն ու հաշիւը պաշտօնական գրութիւններով և պատկերներով. Ալէքսանդրապօլ 1910.

Բենիկ սարղապետ. Երուանդ վարդ. տ. Մինասեան և Հայոց եկեղեցու վերանորոգութեան խնդիրը Տիֆլիզ 1910.

Թատրոն և երաժշտութիւն Ա. Մայիլեանի. յաւելուած—դրամատիքական պօէզիա Վ. Տ.—Ար. Բագու 1910: